95

ՀԵ 92, Էլմ. 170, Հովհ.19:2,5

1. Ո՞վ սուրբ Գլուխ, ինչո՞ւ ես
Ցավի մեջ ընկղմած,
Ինչո՞ւ վիրավորված ես
Եվ փուշերով պսակված:
Ո՞վ սուրբ Գլուխ, փառքովդ
Երկինք կլեցնես,
Բայց հոս արյամբ պատած ես,
Ինծի պատվական ես:

2. Ո՞հ, ի՜նչ ցավով լըցված ես,
Ի՜նչ անարգանքներով,
Տրտմությունով պատած ես,
Բայց վերջը՝ ցնծումով:
Ամեն Քո ցավն ու գութը
Չարերը կփրկե.
Մերն էր բոլոր հանցանքը,
Պատիժն Ան կքաշե:

3. Ի՞նչ խոսք, ով իմ Փրկիչս,
Գտնեմ Քեզ օրհնելու,
Որ հաճեցար իմ անձս
Մահվամբդ փրկելու:
Տե՜ր, տո՛ւր, որ Քո շնորհքովդ
Հավատարիմ մնամ
Եվ հավիտյան Քո սերդ
Բնավ ես չմոռնամ:

4. Չըլլա, որ Քեզ թողում, Տե՜ր,
Եվ ոչ՝ Քեզմե թողվիմ,
Հավատքս Քեզ կընդունի, Տե՜ր,
Եվ միշտ Քուկդ է սիրտն իմ:
Երբ սպառի իմ կյանքս,
Ու մահ ինծի հասնի,
Տո՛ւր, որ հատնին ցավերս,
Հոգիս ալ՝ Քովդ հանգչի: